



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Ա. 2.



# Մ Ե Ժ Ա Ռ Ա Ի Օ Տ Ը

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հ. Յ. Դ. „ՋԱՆԳ“ ԿՕՄԻՏԵԻ

Գինն է 50 սանտ., 25 կոպեկ

Ժ Ը Ն Ե Վ

Հ. Յ. ԿԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆ

1903

Handwritten numbers: 200, 700, 500

12730

Ա. 2.

Մ Ե Ժ Ա Ռ Ա Ի Օ Տ Ը



891.99  
Ա-11

1903

06 DEC 2010

2005

Ա. 2.

891.99

- 4-71

սպ

Մ Ե Ժ Ա Ռ Ա Ի Օ Տ Ը

1/2

1001  
1001

891.99  
22-7



12730

1903

16591

01. 2013

ՄՆԱՅՈՐԴՆԵՐԸ.— ՊԱՏԿԱՍԸ.— ՅԱՅՑՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ  
ՎԵՐՋԻՆ ԺԱԿԱՏԱՍԱՐՑԸ.— ՀՈՐԻՋՈՆՆԵՐՈՒՆ  
ԵՐԳԸ ԵՒ ԱՐՇԱՆՈՑՍՆԵՐԸ

969-82


Ձ Ե Ձ Կ Ը Ն Ո Ի Ի Բ Ե Մ

Ձեզ կը նուիրեմ, մայրե՛ր ու քոյրե՛ր,  
Որ փլատակաց մէջ նստած անյոյս  
Խեղճ ու լալազին, ցորեկ ու գիշեր  
Կ'աղօթէք տեսնել Հայի արշալոյս:

Ձեզ կը նուիրեմ, հէ՛ղ բանտարկեալներ,  
Որ զերթ շղթայուած առիւժք յուսահատ  
Բանտէն, աքսորէն լուռ ու անհամբեր  
Կը ծարուիք լսել Հայրենիքն ազատ:

Ձեզ կը նուիրեմ, հզօ՛ր հայրուկներ,  
Որ Ազատութեան Քուրմերու նման  
Ահեղ պարզել էք Ձեր քաջ բազուկներ  
Աւերակներու եւ Շիրմանց վրան:

Ձեզ կը նուիրեմ, պայծա՛ն հերոսներ  
Տարաբախտ Ազգիս լճուական մարտին,  
Ձեզ, որ հողին տակ երկա՛ր տարիներ  
Անքուն կրսպասէք Մեծ Առաւօտին:



969-82

## Մ Ն Ա Յ Ո Ր Դ Ն Ե Ր Ը

Ու անոնք — մնացորդները՝  
Ողջակիզուած ցեղին՝  
Ծերերը, այրիներն ու որբերը,  
Դաժիճներու սուրբերէն մազապուրծ  
Բուռ մը քաջերը  
Պահապան թողներով արիննացող  
Տաճարներուն, Աւերակներուն և Գերեզմաններուն  
Իրենց գերագոյն դալկութիւնով  
Խաւարներն սպիտակելով՝  
Հեռաւոր ու արիւննոտ հորիզոններէն  
Եկան, եկան, եկան,  
Եւ ոտաբորիկ և անթի և վերաւոր...  
Ու իրենց ահեղ յոգնութիւնը  
Նուիրական Գետին կտակելով,  
Անոր վարդագոյն կոհակները  
Տարփօրէն համբուրած,  
Այս երեկոյ  
Դէպի յաւիտենական սառոյցներու  
Սրբազան լեռը դիմեցին...

Մեռնող երեկոյին միջով  
Սարսափին պէս քարալուռ ու վճռական,  
Տապարամահերէն ու կոշկոճամահերէն ճողոպրած  
Արդեօք դէպի մը  
Նորանոր տառապանքները  
Ընդհարումներն ու արիւնումները

Կը յառաջանան յոխիրներու  
Այս ուխտեալ զաւակները  
Անհունօրէն դժգոյն:

Ու այսպէս անոնք՝  
Սուգի ճամբաներուն  
Աւերակներն ու գերեզմանները  
Հրաժեշտի երկար համոյրներով  
Պատանքելով,  
Գունատ ու տրտում,  
Ինչպէս թափառական բանակ մը  
Գերեզմանազուրկ մեռելներու,  
Գիշերին հետ  
Արտասուքներու հովիտներէն  
Ու արիւնի դաշտերէն  
Սրբազան լեռը բարձրացան.  
Ու այնտեղ,  
Անսահմանօրէն տխուր,  
Իրենց կամաւոր ու յօտալուտ մահուան  
Երգերը երգեցին:

Բորենիներու վոհմակներով պաշարուած  
Անզէն հովիւներու նման,  
Անարցունք աչքերէն  
Սև շանթեր ուղղելով  
Դէպի ահաւոր ու դժգուն  
Լուսթիւնը երկնային՝  
Բոլոր ծերերը ծունկի եկած՝  
Այսպէս երգեցին.

— յՏէր, աստղերուդ չափ

Վէրքեր կան մեր սրտերուն մէջ.  
Ու մեր թափած արցունքներուն թիւը,  
Բոլոր ովկեաններու կաթիլները անցան:  
Անտառներուդ չափ, Տէր,  
Մենք տխուր յուշեր ունինք.  
Եւ մեր արիւնի յիշատակները  
Բոլոր մեռած վերջալոյսներու թուէն  
Աւելի եղաւ:  
Մեր որդիները, Տէր,  
Խոյերու և նոխազներու պէս  
Սպանդանոց տարուեցան.  
Մեր հարսերը աւերակներու վրայ,  
Եւ մեր աղջիկները կանանոցներու մէջ  
Անարգուեցան:  
Մեր փոխած ամէն քայլի տակ  
Սիրելի մաս մը կը հանգչի,  
Ու մեր խմած ջուրը  
Մեռել կը հոտի:  
Մոխիրներու վրայ անգամ  
Ապահով չենք նստած.  
Ու ամեն գիշեր,  
Սարսափին տակ հեծող հանգստի համար,  
Որջեր կը փնտռենք՝  
Աւերակներէ աւերակներ,  
Որոնց վրայ տրամուծիւնը  
Դարևոր կոյր այրիի մը պէս կը նստի:  
Թշուառութեան, արիւնի  
Եւ սարսափի մէջ,  
Ապաշխարութեան քուրձեր հագած,  
Մինչև աստղերդ հասնող



Մըրկի կոծով,  
 Տէր, անունդ աղաղակեցինք.  
 Եւ անսահմանութեանդ պահ լուութեան  
 Դաշոյնները՝  
 Մեր ցաւած հոգիները խոր վիրաւորեցին:  
 Ցաւէն լեզուներս ծամեցինք  
 Ու բոլոր սողուններուն նախանձեցանք.  
 Իսկ Դու լուս մնացիր  
 Մեր տանջանքի ու աղաղակի առաջ:  
 Դու մեզի չեկար,  
 Ահա մենք քեզի կուգանք  
 Հալածանքէն ջուր իջած ծնկուրներով:  
 Ու մեր աստղի ամենաբարձր կետէն  
 Մեր սրտերը անհունութեանդ առաջ  
 Մինչև յատակները բացած,  
 Ու մեր մարմինները մանաւանդ,  
 Որոնք  
 Շղթաներէն, դաշոյններէն ու գնդակներէն  
 Այնքան վայրագօրէն  
 Կապտած, պատռուած ու ծակծկուած են,  
 Կ'ուզենք որ տեսնես անգամ մը:  
 Կ'աղաչենք քեզ այն շրթուներով,  
 Որոնց համբոյրներու գարունները  
 Կործանուած տաճարներուդ  
 Պահ քարերը  
 Կիներէն աւելի սիրեցին,  
 Ու անոնց վրայ խամրեցան“:

Ու դարևոր բիւր կաղնիներու  
 Տապալման ճալթուսին նման,

Բոլոր ծերերը միարեւան  
 Մունչեցին՝  
 — „Տէր, պատասխան տուր մեզ  
 Համր ու խուլ բարձունքէդ“:

Մինչդեռ երկինքը լուս էր  
 Ադամանդազարդ սև մարմարի  
 Չուլածոյի մը նման,  
 Ցուրտ և համր:

Ու հերարձակ այրիները,  
 Վարսաւոր ուռիներու հոծ անտառի մը  
 Այնքան նման,  
 Ճակատնին սրբազան սառոյցներուն  
 Քսելէն յետոյ,  
 Ծնկաչոր ու բազկատարած՝  
 Այսպէս սկսան երգել:

— „Ո՛վ Տիրամայր,  
 Այն հայեացքովդ որ մեռնող Որդուդ նայեցար,  
 Նայէ՛ անգամ մը մեր ցաւի դալիւթեանը,  
 Մեր ցաւը գիշերին պէս լուս է, մութ է  
 Եւ անծայր,  
 Իսկ դու գթառատ ես, յաւիտենական ես  
 Ու Ողորմած.  
 Սարսափն ու արհաւիրքը մենք ապրեցանք,  
 Ու մեր արտասուքներէն  
 Աւերակներն ու գերեզմանները  
 Ճահիճներ դարձան.

Եւ անհունօրէն դեղին  
 Գալիութիւն մը մնաց յիշատակ  
 Այդ սարսափի ու աքսորի օրերէն,  
 Որ տակաւին  
 Կը մտայ մեր դէմքերուն վրայ,  
 Եւ որուն մէջ մեր կեանքը  
 Խունկի նման կը հատնի:  
 Մեր բազուկները ալ յոգնած են  
 Մեռելներ թաղելէն,  
 Իսկ անթաղ մնացածներու դիակներէն,  
 Որոնց հոգեւարները մենք չտեսանք,  
 Բոլոր գիշակներնեքը կշտացան:  
 Յոգնած են մեր աչքերը մանաւանդ  
 Արտասուելէն ու քեզ փնտռելէն:  
 Շատ մայրեր լալէն կուրացան,  
 Շատերը ցաւէն խելագարուեցան  
 Ու շատերն ալ իրենց մանկիկներուն հետ  
 Կամ մորթուեցան, կամ ինքնասպան եղան,  
 Կոյրերն ու անդամալոյծներն անգամ, Մայր,  
 Մեր որդիները մորթեցին  
 Ու անոնց միսերը ծաղրի համար  
 Վաճառքի հանուեցին:  
 Ու մենք, վերջին մայրերս  
 Մեռնող Ժողովուրդի,  
 Խելագար ու կոյր մայրերու հետ  
 Ինքնասպան ըլլալէ առաջ,  
 Վերջին անգամ  
 Քո գուլթը կը հայցենք“:

Ու հզօր սօսաւիւնի մը նման

Բոլոր մայրերը միաբերան  
 Աղաղակեցին՝

— „Ո՛վ, Տիրամայր,  
 Լսէ՛ մեր ցաւի երգերը,  
 Որոնք Մահէն աւելի  
 Տխուր են“:


Եւ մինչդեռ երկինքը  
 Շղարշէ պատանքի մը նման  
 Համրօրէն կը կախուէր հօրիզոններուն վրայ,  
 Մահագոյն ու մեռալալուռ,  
 Ու աստղերը  
 Մահուան թախծոտ կերօններու պէս,  
 Հեռուն,  
 Կը շարունակէին անտարբեր պլպլալ՝  
 Յանկարծ բոլոր մայրերը  
 Յուսահատ յովագներու պէս  
 Մոլեգնօրէն վեր ցատկեցին,  
 Ու մանկիկներու ուսերէն բռնած՝  
 Խաւարի ու լուութեան մէջ մխրձելէն յետոյ,  
 Դէպի աստղերն ամբարձուցին  
 Միահամուռ գոչելով՝

— „Ո՛վ Յիսուս,  
 Ահա և անոնք,  
 Մեր մօի, արիւնի ու ցաւի  
 Զաւակները ապաքախտ,  
 Որոնք սարսափի գիշերներուն մէջ  
 Մեր մաշուած կողերէն

Իսաւորուեցան,  
 Մեր թշուառութիւնն ու ցաւերդը  
 Աւելի հղօրացնելու համար:  
 Անոնք կարմիր են,  
 Որովհետեւ իրենց հայրերու արիւնին մէջ  
 Յաւիտենապէս մկրտուեցան:  
 Անոնց նայուածքները կերտններու բոցին պէս  
 Թախծոտ են,  
 Որովհետեւ իրենց մանկական աչքերը  
 Բացուելու վայրկեանէն  
 Հայրերը փնտուեցին,  
 Բայց գերեզմաններն իսկ չտեսան,  
 Որովհետեւ անոնք  
 Գերեզման չ'ունեցան:  
 Անոնք սովին պէս վտիտ են ու հիւանդոտ,  
 Որովհետեւ մեր հայրուած ստիւքներուն մէջ  
 Կաթ չկար արդէն.  
 Իսկ թշնամիի մայրերը  
 Վեշապներէն  
 Ու Հոռոմի գայլերէն աւելի  
 Անգութ եղան.  
 Ու մենք խոտ ու արմատ կերանք,  
 Անօթութենէն մեր քիմբերուն փակած  
 Լեզուներով,  
 Քարերն ու հողերը լիզեցինք  
 Ահռելի տանջանքով՝  
 Կաթ պատրաստելու համար,  
 Ու այդպէսով անոնց կեանքը երաշխաւորեցինք,  
 Որ մոխիրներէ մոխիրներ  
 Անգիտակից ու թշուառ

Թափառում մը ու հալածանք մը եղաւ  
 Իրենց համար:  
 Ո՛վ Յիսուս,  
 Դու որ մանկիկներուն  
 Այնքան խորունկ սիրեցիր,  
 Լսէ՛ մեզ գէթ ասոնց  
 Սիրուն համար,  
 Որոնց կերպարանքն ու նայուածքները  
 Պաղատանքի անմուռնչ աղօթքներ են  
 Դէպի լուութիւնդ դարձած“...

Մայրերը լուեցին.  
 Մինչգեռ երկինքը,  
 Դատարկ դագաղի մը այնքան նման,  
 Պաղ ու անարձագանք,  
 Անեղծ լուութիւնը կը շարունակէր  
 Ե՛ւ որբերու նայուածքներուն առաջ:






Պ Ա Տ Գ Ա Մ Ը

Ու մինչդեռ ողբերը կ'աւարտէին,  
եւ այրիները  
երկնքի լուծենէն յուսահատ,  
իրենց, ծերերու և մանկիկներու համար,  
ճակատագրին պէս համր ու անդրդուելի,  
Սրբազան լերան սառոյցներուն մէջ  
Գերեզմաններ կը փորէին  
Մայրաբար,  
Ու մինչդեռ մահն ալ, ինչպէս  
Սև չղջիկ մը,  
Կը պատրաստուէր անոնց  
Իր համայնապարփակ թևերուն  
Անարշալոյս գիշերին տակ առնելու,  
Որ ճիշդ մարդու մը նման,  
Որու մարմինին վրայ  
Վէրքեր կը բանան՝  
Անդնդային ու խօլական գոչիւններով  
Լեռը սկսեց գալարուիլ . .  
Եւ բոլոր գոյացած մրրիկները,  
Առաջին օրէն մինչև մեր օրերը,  
Որոնք սրբազան լերան  
Քարայրներուն ու փապարներուն մէջ  
Կ'ամբարուէին իբր նիրհող վագրեր,  
Դաժան, քինախնդիր ու կատաղե,  
Ծանրագին ժայռերու կափարիչները  
Իրենց հզօր կուրծքերէն թօթուած՝

969-82



Բոլորը մէկէն,  
 Որոտընդոստ ու ապերասան,  
 Վիշապներու խուժանին պէս  
 Ժայռահուռ խորութիւններէն  
 Դուրս պոռակացին,  
 Ու մահին սև շրթունքները մուրացող  
 Հալածեալներու  
 Դալիութիւնն ու արցունքը ծծած՝  
 Դէպի աստղերն աշտարակուեցան...

Ու ալ պէտք էր լսել անոնց  
 Արհաւիրքի յուսահատ սոսկաղաղակը,  
 Վայրի գազաններու  
 Մահուան գալարումի պահին  
 Հանած ոռնումին այնքան նման,  
 Ու պէտք էր տեսնել մանաւանդ  
 Սարսափէն կծկող մարմիններուն  
 Թաւալումներն ահնելի...

Եւ մինչդեռ մրրիկները,  
 Խաւարի ու լուութեան  
 Կապարէ դրունքները խորտակած,  
 Մոլեգնաբար կը սլանային  
 Դէպի աստղային հեռուն,  
 Ու մնացորդներու ամբոխն ալ  
 Քարացած ու ակնապիշ կըսպասէր  
 Աշխարհի գահավիժումին  
 Դէպի անէութեան տարտարոսները՝  
 Անդին, շղթայակիր

Տիտանեան ծերունիի մը՝  
 Հնադարեան որսկան արքայի մը  
 Այնքան նման՝  
 Խաւարչուտ վիհերէն  
 Դուրս գալն յայտնուեցաւ,  
 Որ վեհապանծ արագութեամբ,  
 Ծանրադէմ ու վճռական,  
 Իր քերծէներուն հետ  
 Դէպի ամբոխը կը յառաջանար:  
 Ու երբ քանի մը քայլ միայն  
 Իրեն ամբոխէն կը բաժնէր,  
 Հնադարեան քուրմի մը հանդիսաւորութեամբ,  
 Պատկառելի ու սրբանուէր,  
 Այսպէս խօսեց անոնց.

— «Ո՛վ իմ ցեղի մնացորդները վերջին,  
 Անյիշատակ դարերու  
 Անդնդային բանտարկումէս յետոյ,  
 Այս գիշեր վերջապէս,  
 Եւ միայն գիշերուան մը համար,  
 Մրրիկներէն ազատագրուած  
 Մինչև Արշալոյսները  
 Չեզի հետ պիտի ըլլամ,  
 Որոնց աւետեսին համար,  
 Լեռնաբանտէս ձեզի բարձրացայ»

»Մեր ցեղի կապոյտ ու սև օրերուն,  
 Այս յաւիտենական անխօս վկայի  
 Սրտին մէջ  
 Գիշերներու և շղթաներու հետ նստած,  
 Մտիկ կ'ընէի դարերէ ի վեր

Նուիրական գետին,  
 Որ „ազան են“ կը շառաչէր.  
 Բայց աւաղ,  
 Ազատութիւնը ամպի պէս անցաւ  
 Եւ նա սգաւոր այրիի նման  
 „Ստրուկ են“ սկսեց մրմնջել . .  
 Ու մեր ցեղի թափած բոլոր  
 Արիւններն ու արցունքները  
 Հողերուն տակով  
 Ինձի ուղարկել շարունակ  
 Իր տեսած բոլոր  
 Վատութիւններն ու անտարբերութիւնը  
 Մեր ցեղի ցիրուցան մասերու  
 Գիշերները  
 Ինձի պատմելով լալագին:

„Բայց ովսաննայ այն քաջերուն,  
 Որոնք ըմբոստանալով  
 Եղեռնին դէմ“ . . .  
 Մեր ցեղի կորովը խորոյկի մը պէս  
 Լեռներուն մէջ վառ պահեցին:  
 Ու դարձեալ ովսաննայ անոնց,  
 Որոնք դէպի  
 Բանտերն ու կառափնատերը  
 Ու դէպի  
 Հեռաւոր քաղաքները ստրկութեան՝  
 Անընկճելիօրէն,  
 Երկաթակամ ու անձուրաց քալեցին:

„Փառք և օրհնութիւն անոնց,  
 Որոնք ձեզի պէս վայրապար

Այդ նոր ու խուլ Աստուծոն  
 Չը դիմեցին բնաւ,  
 Որ ձեր հայրերու Աստուածը չէ.  
 Այլ խունկի տեղ վառօդ ծխեցին  
 Ազատութեան Աստուածուհուն,  
 Որ ձեր հայրերու Աստուածուհին էր:

„Կրկին ու կրկին  
 Փառք և ովսաննայ այն բոլոր  
 Կտրիճներուն,  
 Որոնք իրենց մարմիններու  
 Բրգաւորութիւնը երգումով  
 Այս գիշերը դարբնեցին:  
 Որովհետեւ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի՝  
 Այս գիշեր  
 Վերջին գիշերն է  
 Մեր ցեղի դարեւոր  
 Տառապանքներուն:  
 Եւ այս յիշատակելի գիշերը  
 Յղի է Արշալոյսներով  
 Որոնք մեր ցեղի  
 Յաղթանակի փողերուն հետ  
 Պիտի բռնկին:  
 Ու ես կը լսեմ արդէն  
 Նուիրական գետի հրճուանքը,  
 Որ Արշալոյսներու հովերէն գինով  
 Ափերէն դուրս վազած  
 Ուրախութեան մրմունջներով  
 Աւերակները կ'ողջագուրէ“:

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ՎԵՐՉԻՆ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Ու մինչդեռ սրբազան լերան վրայ  
Յուսահատ մնացորդները՝  
Ազատութեան պատգամէն  
Կը կենդանային ու կը զուարթանային,  
Ու հինաւուրց Արբան՝  
Որբիկները զուարակներու պէս  
Անհուն սիրով իր շուրջն հաւաքած,  
Արծուի աչքերը հորիզոններուն  
Սպասումի պրկումով կը սեւեռէր . . .

Անդին՝ լայնատարած տափաստաններու,  
Դարափանդներու ու սարահարթներու վրայ  
Մինչև հեռաւոր Հեռունները  
Ծիածաններ կը կամարուէին . . .  
Ու խիզախ ըմբոստացումներու  
Եւ մաքառումներու մէջ աստուածացած  
Բողո՛ր հերոսներու և նահատակներու  
Ոսկորները,  
Փայլակներու փոթորկումին այնքան նման,  
Դուրս կը ժայթքէին  
Հողերու, դագաղներու և մոխիրներու  
Ախչամուխչերէն.  
Կը մնաւորուէին ու կը կերպարանաւորուէին,  
Որոնց պայծառութենէն  
Գիշերը կը շոգիանար . . .

Եւ ոսկեայ վահանները

Ու ադամանդէ ասպարները ձեռքերուն,  
 Գլուխներուն աստղակու թագեր,  
 Ու ծիրանիէ քղամիաներով,  
 Դէմքերը այնքան նման արևներու,  
 Ու ոտքերը կրակէ սիւններու,  
 Ահա վռէժի անմահ Գուրմերը.

— Սերոբն ու Բարկէն  
 Ժիրայր ու Պետօ  
 Արարօ և Արամեան  
 Մարտիկ ու Աւետիսեան  
 Գնունի ու Սուրէն  
 Դեւեան և Վազգէն  
 Ծառուկեան և Գուրգէն  
 Իրենց բոլոր  
 Զէնքի, Աքսորի ու Մահի  
 Հրաշափառ ընկերներով,  
 Շառագոյն նժոյգներու վրայ  
 Քառարշաւ կը սլանան  
 Ծիածանի տարածութեան միջով,  
 Իրենց արիւնի Արշալոյսներուն  
 Նախասօնակը նշանակելով:  
 Եւ անհամար լուսիներէ  
 Շարուած ժանեակներու պէս  
 Ազատութեան սեղանին վրայ  
 Բոլոր ողջակիզուածները  
 Հերոսներու շաւիղները եղերած  
 Այսպէս կ'երգէին.

— Պովսաննայ ձեզի, ո՛վ մեր  
 Առաջնորդները առիւծակամբ,

Որ այնքան խիզախօրէն  
 Մահերու գագաթներէն քալելով՝  
 Այս լուսեղէն բարձունքներու  
 Սրբազան ու պայծառափայլ  
 Արծիւները դարձաք“... .

Եւ տիեզերքը  
 Ակնվանիի պէս պայծառ ու ականակիտ,  
 Համաստեղութիւններէ համաստեղութիւններ  
 Մինչև Անէութեան պարիսպները  
 Ազատութեան թափօրը  
 Անհունօրէն անդրագարձներով՝  
 Կը վառուէր  
 Ադամանդէ ջահի յը նման:



Ու մինչդեռ լուսահար աչ  
 Յայտնութիւնը  
 Անընկճելի հերոսներուն,  
 Լուսաշողշող միջոցին մէջ  
 Ռազմի երգերով  
 Արձագանքներուն հետ կ'անյայտանար,  
 Վարը,  
 Աւերակներու բոլոր կոյտերուն վրայ  
 Մինչև խութերը անմատոյց լեռներուն,  
 Եղեռնին ու Վրէժին  
 Վերջին ընդհարումը կ'արիւնէր:

Արդեօք ո՞ր գիշերներուն մէջ,  
 Ո՞ր աստղերուն տակ  
 Եւ ի՞նչ մրրիկներու հետ եղբայրաբար  
 Սա վերջին ճակատամարտի ծրագիրը  
 Այնքան յանդուգն ու խիզախ  
 Տիրականօրէն վճռեցին...  
 Կամ ըսէք, ո՞ր սև ամպերէն,  
 Ո՞ր դժոխքներէն  
 Ու ո՞ր փառքերու դաշտերէն  
 Իրենց աստուածային կատաղանքի  
 Սա փայլակներուն հետ  
 Անվրէպ հրացաններու խուրձերը  
 Խլեցին:  
 Ու մեր լեռնորդիները, ըսէք,  
 Յաղթանդամ ու կորովի,

Ո՞ր անտառներէն ու ո՞ր եղեգնուտերէն  
 Յաւերժօրէն կուսական,  
 Իրենց սա ահաւոր  
 Նիզակներն ու գեղարդները  
 Կարեցին:  
 Արդեօք ո՞վ  
 Անոնց բազուկներուն մէջ  
 Անկարելի քաջութիւններու  
 Ու մահառիթ հարուածներու  
 փրկարար կրակն հրդեհեց:  
 Եւ Ո՞վ  
 Անոնց նայուածքներուն մէջ  
 Քարացնող ու հպատակեցնող ու մահացնող  
 Մետուղի ուժը հիւսեց:

Օ՛, ալ պէտք էր տեսնել  
 Արիւնկզակ թշնամու դիականց  
 Բիւրապատկումներն ու լեռնաւորումները  
 Մեր քաջաց քաջերու  
 Գարշապարներուն տակ:  
 Ու անոնց պաղատանքներն ու կարկառումները  
 Որ առաջին անգամ ըլլալով  
 Այնքան տիրականօրէն շաչող  
 Մեր սուրերը  
 Կը կորզէին անոնցմէ:  
 Պէտք էր տեսնել մանաւանդ  
 Ծովացած արիւնէն  
 Ու գալարուող հրդեհի բոցերէն  
 Շառագունած խաւարի մէջ ահարկու  
 Անյագ սուրերու

Հոինդներուն ու շողիւններուն տակ  
Թշնամիի հոգեարները  
Ճիւղալին,  
Ու անոնց երգումները ստրկական  
Գերութեան,  
Կոխկոտուած կրներու և ժանկիկներու  
Լալագին սողոսկումները  
Դիակներու բլուրներու վոյլէն  
Դէպի մեր յաղթական քաջերու  
Կօշիկներն ու քղանցքները:  
Ու մեր քաջաց ընկերներու  
Լուսաւոր շիջումները  
Մեծ ջրվէժներու անկումին այնքան նման  
Յաղթանակի ռազմագաշտին վրայ  
Սուրբրու ծիածանին, վառօդի ամպերուն  
Համբոյրներուն և դրօշներուն տակ. . .

Եւ կենդանի քաջերու  
Ռազմական երգերը  
Արիւնի գետերուն  
Հզօր շաշիւնին համընթաց,  
Գերեզմաններէ գերեզմաններ  
Մեռելներու  
Իրարու տուած աւետիսը. . .

Օ՛, այս բոլորը իրարու խառնուած  
Ե՛ւ վայրենի և՛ ահեղ և՛ սրբազան  
Հորիզոններէ հորիզոններ  
Մեր նոր կեանքի Արշալոյսներու  
Նախերգը կը համերգէին:

ՀՈՐԻԶՈՆՆԵՐՈՒՆ ԵՐԳԸ

ԵՒ

ԱՐՇԱԼՈՅՄՆԵՐԸ

Բանտերն ու թիարանները  
Եւ դէպի գնդաները խաւարչուս  
Գիշերներով քշուեցանք...

„Մենք անոնք ենք,  
Որ Ձեզ անհաւասար կռուին մէջ  
Մենակ թողնելով  
Վատաբար  
Կամ մեր տառապանքները  
Աշխարհին ցուցագրեղու համար  
Տարագրելով  
Ազատ հեռուներն ապաստանեցանք...

„Մենք անոնք ենք,  
Որ եղեռնի ճիրաններէն  
Ազատ ըլլալով մեր ծնունդով,  
Անտարբեր կը լսէինք  
Ձեր վիշտերն ու արիւնոտիլը  
Ու մեր շռայլութիւնն ու ազահոթութիւնը  
Ձեզմէ աւելի սիրելով  
Ձեզ անպաշտպան, անօթի ու անզէն  
Կը թողնէինք...

— „Եւ սակայն մենք բոլորով  
Եւ պայծառագէժ  
Եւ կորավիզ և ամօթահար,  
Ձեր փառքի լուսադէմին հետ  
Մեր սրտերը ողջակիզելու ճարաւով  
Եղբայրաբար  
Դարձեալ Ձեզի կուգանք  
Ձեր յաղթանակէն գինով:

Ու մինչդեռ ճակատամարտը  
Ահեղօրէն կը շարունակուէր  
Եղեռնի դիտապալ զաւակներու  
Լեռներուն վրայ,  
Ու մեր քաջերու սուրբերէն փախած  
Վատերը սարսափահար  
Անգունդներու, գետերու և տղմուտներու մէջ  
Ապաստան կը մուրային,  
Անդին,  
Փառքի բոլոր հորիզոններէն  
Մեր վրէժի բոսորավառ կաճառին  
Օրհնութեան ձայները  
Բուրվառներու պէս կը խնկարկուէին:

— „Փառք և օրհնութիւն ձեզի,  
Որ եղեռնի իժերու գլուխները  
Ձեր երկաթէ գարշապարներուն տակ  
Մահառիթօրէն տրորելով՝  
Մեր ճամբաները դէպի Ձեզ  
Անխափանօրէն հարթեցիր...

„Մենք անոնք ենք,  
Որ ըմբոստացումի և մաքառումի օր մը  
Ձեզ յաջորդներ թողնելով  
Ոճրագործ արքայի ստրուկներէն  
Դէպի

— „Նորէն ու նորէն  
Փառք և օրհնութիւն Ձեզի,  
Դուք այլևս յաւիտենականօրէն  
Մեր Յիսուսները ծիրանի:  
Օ՛ թողէ՛ք որ մեր շրթունքները  
Ձեր շրթունքներուն, ձեռքերուն  
Ու ոտքերուն  
Երկիւղածաբար ու տարփագին  
Գամուելով,  
Մեր նոր կեանքի համար  
Մոռացումն ու եղբայրութիւնը  
Անբակտելիօրէն  
Մեր սրտերը իրարու շղթայեն“:

Ու հազիւ հորիզոններուն երգերը  
Կը մարէին,  
Որ ուղմադաշտի բոլոր կետերէն  
Ճակատամարտի աւարտին հետ  
Յաղթանակի փողերը  
Անտառնալիօրէն կը հնչէին...

Եւ շառագունած հորիզոններու  
Շղարշներու տակէն ժպտող  
Արշալոյսներու հոյլը,  
Յաւերժահարսերու թափորի մը նման,  
Հանդիսաւոր լուսութեամբ,  
Իրենց լուսավառ համբոյրներու  
Երփներանգ պսակները կը բոլորէին  
Յաղթական ճակատներու  
Գիշերախառն կնճիռներուն շուրջը,  
Որոնք առաւօտին մէջէն  
Դիակները, արիւնները ու յոսիւրները  
Լուսապատանքելով,  
Արշաւանքի քայլերգերով  
Դէպի սրբազան լեռը  
Կը սուրային.

Ո՛ւր, մնացորդները  
Ա՛լ ազատագրուած ցեղին,  
Շշթայակիր Արբայի պատգամէն  
Գինով,  
Բայց և Արշալոյսներուն հետ

Անոր երազի նման  
Անյայտացումէն տխուր՝  
Սրտատրոփ կըսպասէին. . .

Ու երբ յաղթական բանակը՝  
Հեռաւոր հորիզոններէն եկած  
Հարազատներով խտացած՝  
Սրբազան լեռը կը բարձրանար,  
Բոլոր ծերերն ու այրիները  
Ու մանկիկները  
Խանդավառութեան արցունքները  
Արշալոյսներէն պայծառացած աչքերուն,  
Ընդառաջ կը գահավիժուէին  
Աղաղակելով՝

— «Փառք և ովսաննայ  
Մեր անդրանիկներուն,  
Որ մեր կողերէն մաւորուելով  
Միանգամայն  
Մեր խնկելի ստուածները կը դառնան:  
Փառք և ովսաննայ  
Մեր զաւակներուն,  
Որ իրենց արիւններուն մէջ  
Եղեռնը խեղդելով՝  
Իրենց սրբազան ոսկորներուն լեռներով  
Մեր աննուաճելի Ազատութեան  
Դրունքներն ու պատնէշները  
Կանգնեցին  
Բովանդակ ապագաներու համար:

— «Դարձեալ փառք և ովսաննայ  
Մեր զաւակներուն,  
Որ բոլոր սուրբերէն աւելի պայծառ  
Ու բոլոր առիւծներէն  
Աւելի գեղեցիկ են ու ահաւոր. . .

«Եկէք, արիւններէն կարմրած  
Ու վառօգններէն սեցած,  
Ո՛վ մեր փառքի  
Շուշանները անբիծ,  
Ահա մեր բազուկները սովամաշ  
Եկէք մեր հայրական ու մայրական  
Գիրկերուն մէջ  
Ձեր փառքի քունը քնանալու. . .  
Եւ ահա մեր շրթունքները կարօտամաշ,  
Որ ձեր աստուածային համբոյրներուն  
Ահռելիօրէն ծարաւ  
Յաւիտենական գիշերներուն պէս  
Դէպի արշալոյսներդ կը կարկառին  
Պաղատանքով. . .  
Ու Գրկախառնումներու փոթորիկը  
Սրբազան լեռան լանջերուն վրայ  
Անսահմանօրէն ծաւալեցաւ:  
Պապական շրթունքները  
Իրար կը բեւեռէին անոնք,  
Որոնք ճակատամարտէն ու մահերէն  
Յաղթական ու վերաւոր կը վերադառնային,  
Անոնք, որոնք իրարու մեռած կը կարծէին,  
Անոնք, որոնք Հեռաստաններէն  
Իրարու համար երազելէն կը հիւծուէին,

Անոնք, որոնք սարսափի գիշերներէն մագապուրծ  
Իրարու մասին կ'անգիտանային,

Անոնք,

Որոնք բանտերու, թիարաններու

Ու խաւարանիստ աքսորավայրերու մէջ

Գերեզման կը մուրային,

Ու անոնք վերջապէս,

Որոնք թէև նոյն ցեղէն

Բայց իրարու համար օտար էին. . .

Եւ բոլորը ալ յաւերժօրէն

Իրարու վերստին գտած ու միացած,

Երկնի ու կարօտագին համբոյրներու

Համերգի ալեկոծումով

Ազատութեան

Մեծ առաւօտն ադամանդեայ

Այսպէս կը յաւիտենականացնէին:

Ու երբ սեղմումներն ու համբոյրները

Ու նորանոր երգումները

Անձնուրացութեան

Փառքի առաւօտը կը սրբագործէին,

Հերոսները՝

Իրենց պատմութեաններն ու զէնքերը

Մերկացած՝

Նահատակ ընկերներու յիշատակին համար

Ս'առաջարկէին մաղթանք կատարել:

Ու բովանդակ ցեղը

Խոնարհուած դրօշներու

Սուրիներու ու սուրերու

Անտառներուն առաջ՝

Ծունկի եկած բարդիբարդ՝  
Երկիւղածօրէն սկսեց աղօթել:

— «Փառք և խաղաղութիւն Ձեզի,

Ո՛վ երջանիկ նահատակներ,

Որ Վրէժի պայծառ թիթեռներ դարձած

Այնքան տարփօրէն

Ձեր աստուծային փոշին

Թափելէ յետոյ,

Շտապեցաք անոր բոցերուն մէջ

Անհունօրէն այրուելու:

Դուք մեր փառքի բուրաստաններու

Վարդերը կարմիր,

Ու նարգիսներն անթառամ,

Դուք մեր փառապանծ

Ռահվիրաները—

Ազատութեան խութերուն ու առապարներուն,

Դուք մեր առիւծները ճերմակ

Ու արծիւները ոսկեվառ,

Ալ ասէ վերջը

Թո՛ղ ձեր աճիւնները անարատ,

Հայրենիքի ազատ հողերուն տակ

Այլևս անվրդով հանգչին:

«Ու կերդնունք,

Մեծ Առաւօտին ու Ձեր առաջ:

Մեռնիլ անտրտունջ

Ա՛յն իտէալին համար,

Որու ադամանդակուռ սուրերը


Դուք եղաք:

Փառք և խաղաղութիւն Ձեզի

Նորէն ու նորէն,  
Ու բոլոր յաւիտեաններու համար՝:

Եւ երբ այսպէս յաւերժացնելով  
Նահատակներու յիշատակը  
Թշնամիէն խլուած  
Բիւրաւոր թնդանօթները  
Ամպրոպային գոռումով  
Սրբազան լեռնէն միահամուռ  
Մաղթանքն ու երգումը կ'ազդարարէին՝  
Անսահմանութեան  
Ու թաղուած ու անթաղ  
Նահատակներուն,  
Բոլորը միասին  
Սրբազան լեռնէն ցած իջնելով,  
Ցնծութեան երգերով դիմեցին  
Նախ նուիրական գետը,  
Ինչպէս նոր Յորդանան մը,  
Ու անոր արշալոյսներէն  
Մաքրուած ու օրհնուած  
Զրեբուն վճիտութեան մէջ՝  
Ազատութեան, Հաւասարութեան  
Եւ եղբայրութեան անունով  
Միահամուռ ու յաւիտենապէս մկրտուելով,  
Դէպի հորիզոնները ցրուեցան՝  
Նոր երրորդութեան անկործան տաճարները  
Բոլոր յաւիտենականութիւններու համար  
Եղբայրաբար  
Վրէժի գերեզմանին վրայ կանգնեցնելու:







Գինն է 50 սանտ., 25 կոպեկ

«Ազգային գրադարան»



NL0322466